ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՇՀԾՁԲ-20/1-1

ք. Երևան 20-ը մայիսի 2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության այութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և Ա/Ձ Մեժլում Գրիգորյանը, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հատուկ ինժեներական ճանապարհաշինական տեխնիկայի վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին և գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները: Ընդ որում Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 2 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության առավելագույն գինը կազմում է 33 000 000 (երեսուներեք միլիոն) ՀՀ դրամ : Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցված Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ այն երկկողմ հաստատելու պահից՝ 15 բանկային օրվա ընթացքում՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ժամանակահատվածում, սակայն ոչ ուշ քան 2017թ. դեկտեմբերի 10-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է **13** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2, N3 և N4,4.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.11 Սույն պայմանագով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ինժեներական զորքերի վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	Ա/Ձ Մեժլում Գրիգորյան
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան, 11 շենք, 20 բն.
ՀՀ ՖՆ Ա գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ, Աբովյանի մասնաճյուղ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 205113205384
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 43078315
ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ	
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 1
N ՇՀԾՁԲ-20/1-1 պայմանագրի

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
Ոչ էլեկտրական մեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություններ (Հատուկ ինժեներական ճանապարհաշինական տեխնիկայի վերանորոգման ծառայության ձեռքբերում) այդ թվում՝	
բարձր արտադրողականության ճանապարհաշինական տեխնիկայի վերանորոգում	Վերանորոգումն ըստ Կամացու Դ-355 և Շանտու ՍԴ-42 տեխնիկայի տեխնիկական նկարագրության և շահագործման հրահանգների:
Կամացու Դ-355 և Շանտու ՍԴ-42 տեխնիկայի վերանորոգման ծառայություններ	Ըստ ճապոնիայի «Կամացու » և ՁԺՀ «Շանտու» ԲԲԸ-ների կողմից թողարկված վերանորոգման ձեռնարկների

Ծանոթություն՝

1. Վերանորոգումը իրականացվելու է ՀՀ ՊՆ 13516 զորամասի տեխնիկայի գնվելու վայրում (առաջնագծում), միջին հեռավորությունը մեկ ուղղությամբ մոտ 200 կմ հաշվարկով:
2. Վերանորոգման ծառայություններն իրականացնելիս պահեստամասերը կարող է տրամադրվել ՀՀ ՋՈՒ ԻՋ վարչության կողմից:
3. Մեծածավալ պահեստամասերի տեղափոխումը, ավտոկռունկի և եռակցման ագրեգատի հատկացումը իրականացվելու է ՀՀ ՊՀ 13516 զորամասի կողմից:
4. Ծառայությունների մատուցումը իրականացվում է ՀՀ ՋՈՒ ԻՋՎ հայտերի հիման վրա:

- Տեխնիկայի խափանման վերաբերյալ ծառայությունը մատուցողին տեղեկացնելուց հետո Կատարողը պետք է արձագանքի 2 աշխատանքային օրվա ընթացքում և անսարքությունները վերացվեն ոչ ուշ քան 7 աշխատանքային օրվա ընթացքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ Ա գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի տնօրեն, ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

Ա/Ձ Մեժլում Գրիգորյան
ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան, 11 շենք, 20 բն.
«Ինեկոբանկ» ՓԲԸ, Աբովյանի մասնաճյուղ
Հ/Հ 205113205384
ՀՎՀՀ 43078315

Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 2
N ՇՀՄՁԲ-20/1-1 պայմանագրի

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ Հատուկ ինժեներական ճանապարհաշինական տեխնիկայի վերանորոգում, այդ թվում՝	Չ/մ	Միավորի գինը ՀՀ դրամ
	I ՇԱՐԺԻՉ		
1	Շարժիչի հանման և տեղադրման ծառայություն	հատ	300000
	Շարժիչի արատավորման ծառայություն	հատ	50000
3	Շարժիչի բլոկի մաքրման ծառայություն	հատ	20000
4	Շարժիչի մասերի մաքրման ծառայություն	հատ	20000
5	Շարժիչի ռեզինոտեխնիկական պատրաստվածքների /միջադիրներ, խցիչներ/ փոխարինման ծառայություն	հատ	20 000
6	Շարժիչի հիմնական ներդրակների հանման տեղադրման ծառայություն	հատ	60000
7	Շարժիչի հիմնական ներդրակների հանման տեղադրման ծառայություն (8401.12 շարժիչի)	հատ	30000
8	Շարժիչի շարժաթևային ներդրակների հանման տեղադրման ծառայություն	հատ	60000
9	Շարժիչի մեկ հատ մխոցի մխոցային օղերի փոխարինման ծառայություն	հատ	7000
10	Շարժիչի մեկ հատ գլանի հանման տեղադրման ծառայություն	հատ	10000
11	Շարժիչի մեկ հատ մխոցի հանման տեղադրման ծառայություն	հատ	10000
12	Շարժիչի մխոցի մեկ հատ մխոցամատի հանման տեղադրման ծառայություն	հատ	5000
13	Շարժիչի մեկ հատ շարժաթևի հանման տեղադրման ծառայություն	հատ	10000
14	Շարժիչի մեկ հատ շարժաթևի հանման տեղադրման ծառայություն(8401.12 շարժիչի)	հատ	7000
15	Շարժիչի մեկ հատ շարժաթևի ականոցի փոխարինման ծառայություն	հատ	2000
16	Շարժիչի յուղի պոմպի ստենդավորման ծառայություն	հատ	15000
17	Շարժիչի յուղի պոմպի վերանորոգման ծառայություն	հատ	30000
	Շարժիչի յուղի պոմպի վերանորոգման ծառայություն (8401.12 շարժիչի)	հատ	25000
19	Շարժիչի յուղի պոմպի հանման տեղադրման ծառայություն	հատ	15000
20	Շարժիչի յուղի պոմպի հանման տեղադրման ծառայություն (8401.12 շարժիչի)	հատ	30000
21	Շարժիչի քարտերի հանման և տեղադրման ծառայություն	հատ	50000
22	Շարժիչի մեկ հատ գլխիկի կափարիչի հանման և տեղադրման ծառայություն	հատ	5000
23	Շարժիչի մեկ հատ գլխիկի հանման և տեղադրման ծառայություն	հատ	20000
24	Շարժիչի գլխիկի մեկ հատ արտածման փականի հանման տեղադրման ծառայություն	հատ	5000
25	Շարժիչի գլխիկի մեկ հատ ներածման փականի հանման տեղադրման ծառայություն	հատ	5000
26	Շարժիչի բաշխիչ լիսեռի հանման և տեղադրման ծառայություն	հատ	25000
27	Շարժիչի բաշխիչ լիսեռի մեկ հատ ականոցի հանման տեղադրման ծառայություն	հատ	6000
28	Շարժիչի բաշխիչ լիսեռի մեկ հատ հրիչի հանման և տեղադրման ծառայություն	հատ	4000
29	Շարժիչի ծնկաձև լիսեռի հանման և տեղադրման ծառայություն	հատ	70000
30	Շարժիչի ծնկաձև լիսեռի մեկ հատ ատամնանիվի հանման տեղադրման ծառայություն	հատ	25000
31	Շարժիչի ծնկաձև լիսեռի հղկման ծառայություն	հատ	285000
32	Շարժիչի ծնկաձև լիսեռի ողորկման ծառայություն	հատ	10000
	Շարժիչի ծնկաձև լիսեռի ստուգման ծառայություն	հատ	25000
	Շարժիչի ծնկաձև լիսեռի առանցքակալի վերևի և ներքևի կիսաօղերի հանման տեղադրման ծառայություն	հատ	15000
35	Շարժիչի մեկ հատ թողարկիչ կոլեկտորի հանման տեղադրման ծառայություն	հատ	5000
36	Շարժիչի ջրի /աջ, կամ ձախ/ խողովակի հանման տեղադրման ծառայություն	հատ	5000
37	Շարժիչի մեկ հատ վառելիքի խողովակի հանման տեղադրման ծառայություն	հատ	2000
38	Թափանիվի հանման և տեղադրման ծառայություն	հատ	8000
39	Թափանիվի ատամնավոր օղագոտիի հանման տեղադրման ծառայություն	հատ	15000
40	Շարժիչի քարտերի պաշտպանիչի հանում և տեղադրում	հատ	25000
41	Շարժիչի յուղի ռադիատորի հանման և տեղադրման ծառայություն	հատ	35000
42	Շարժիչի յուղի ռադիատորի վերանորոգման ծառայություն	հատ	50000
43	Շարժիչի թափանիվի քարտերի հանման և տեղադրման ծառայություն	հատ	10000
44	Շարժիչի մեկկ հատ փոկի հանման տեղադրման ծառայություն	հատ	5000
45	Շարժիչի գեներատորի հանման տեղադրման ծառայություն	հատ	15000
46	Ստարտերի հանման տեղադրման ծառայություն	հատ	25000
	II Սնուցման համակարգ		
47	Վառելիքի մեկ հատ բաքի հանման և տեղադրման ծառայություն	հատ	57000
48	Վառելիքի բաքի մաքրման ծառայություն	հատ	15000
49	Վառելիքի խողովակաբարերի հանման տեղադրման ծառայություն	հատ	15000
50	Ցածր ճնշման վառելիքի պոմպի հանման և տեղադրման ծառայություն	հատ	15000

51	Բարձր ճնշման վառելիքի պոմպի հանման և տեղադրման ծառայություն	հատ	25000
52	Բարձր ճնշման վառելիքի պոմպի և բոցամուղերի ստենդավորման ծառայություն	հատ	40000
53	Բարձր ճնշման վառելիքի պոմպի վերանորոգում	հատ	78000
54	Բարձր ճնշման վառելիքի մեկ հատ բոցամուղի հանման և տեղադրման ծառայություն	հատ	5000
	III Գազի արտանետման համակարգ		
55	Խլացուցիչի հանման և տեղադրման ծառայություն	հատ	10000
56	Տուրբոճնշակի հանման տեղադրման ծառայություն	հատ	50000
57	Տուրբոճնշակի վերանորոգման ծառայություն	հատ	40000
	IV Հովացման համակարգ		
58	Ռադիատորի հանման տեղադրման ծառայություն	հատ	125000
[illegible]	Ռադիատորի վերանորոգման և մաքրման ծառայություն	հատ	80000
[illegible]	Ռադիատորի կախոցի մեկ հատ բարձիկի հանման տեղադրման ծառայություն	հատ	5000
61	Ռադիատորի հովվացուցիչի հանման տեղադրման ծառայություն	հատ	50000
62	Շարժիչի ջրի պոմպի վերանորոգման ծառայություն	հատ	26000
63	Շարժիչի ջրի պոմպի հանման տեղադրման ծառայություն	հատ	20000
64	Հովացման մեկ հատ խողովակների հանման տեղադրման ծառայություն	հատ	5000
65	Օդի ռադիատորի հանման տեղադրման ծառայություն	հատ	35000
66	Օդի ռադիատորի մաքրման կամ վերանորոգման ծառայություն	հատ	45000
67	Հովհարի հանման տեղադրման ծառայություն	հատ	50000
	V Կցորդում		
68	Հիդրոտրանսֆորմատորի հանման տեղադրման ծառայություն	հատ	90000
69	Հիդրոտրանսֆորմատորի վերանորոգման ծառայություն	հատ	315000
[illegible]	Հիդրոտրանսֆորմատորի մաքրման ծառայություն	հատ	36000
[illegible]	Հիդրոտրանսֆորմատորի յուղի պոմպի հանման տեղադրման ծառայություն	հատ	15000
72	Հիդրոտրանսֆորմատորի կափույրների հանման տեղադրման ծառայություն	հատ	15000
73	Հիդրոտրանսֆորմատորի կափույրների մաքրման ու վերանորոգման ծառայություն	հատ	50000
74	Հիդրոտրանսֆորմատորի յուղի հովվացման ռադիատորի հանման տեղադրման ծառայություն	հատ	45000
75	Հիդրոտրանսֆորմատորի օժանդակ կափույրի հանման տեղադրման ծառայություն	հատ	20000
	VI Հիդրավլիկ համակարգ		
76	Հիդրոբաքի հանման տեղադրման ծառայություն	հատ	65000
77	Հիդրոբաքի քանդման և մաքրման ծառայություն	հատ	50000
78	Հիդրոբաքի կափույրի վերանորոգման ծառայություն	հատ	35000
79	Հիդրոբաքի կափույրի փոխարինման ծառայություն	հատ	40000
80	Հիդրոգլանների հանման և տեղադրման ծառայություն	հատ	40000
81	Հիդրոգլանների վերանորոգման ծառայություն	հատ	50000
82	Հիդրոգլանների մաքրման ծառայություն	հատ	55000
83	Ղեկային մեխանիզմի կառավարման վահանակների հանման տեղադրման ծառայություն	հատ	50000
84	Ղեկային մեխանիզմի կառավարման վահանակի վերանորոգման ծառայություն	հատ	30000
85	Հիդրավլիկայի բաժխիչի հանման տեղադրման ծառայություն	հատ	80000
86	Հիդրավլիկայի բաժխիչի վերանորոգման ծառայություն	հատ	60000
87	Հիդրավլիկայի պոմպի հանման տեղադրման ծառայություն	հատ	50000
88	Հիդրոգլանի խնձորակի փոխարինման ծառայություն	հատ	20000
[illegible]	Հիդրոգլանի կափույրի հանման տեղադրման ծառայություն	հատ	25000
90	Հիդրոգլանի կափույրի վերանորոգման ծառայություն	հատ	20000
	VII Փոխանցման տուփ		
91	Փոխանցման տուփի հանման տեղադրման ծառայություն	հատ	425000
92	Փոխանցման տուփի քանդման և արատավորման ծառայություն	հատ	45000
93	Փոխանցման տուփի մասերի մաքրման ծառայություն	հատ	25000
94	Փոխանցման տուփի հավաքման ծառայություն	հատ	380000
95	Փոխանցման տուփի կափույրի հանման տեղադրման ծառայություն	հատ	110000

[illegible]	Փոխանցման տուփի կափույրի վերանորոգման ծառայություն	հատ	60000
97	Փոխանցման տուփի մեկ հատ օղի փոխարինման ծառայություն	հատ	10000
98	Փոխանցման տուփի մեկ հատ սկավառակի հանման տեղադրման ծառայություն	հատ	3000
99	Ղեկային մեխանիզմի կափույրի հանման տեղադրման ծառայություն	հատ	70000
100	Ղեկային մեխանիզմի կափույրի վերանորոգման ծառայություն	հատ	60000
101	Ղեկային մեխանիզմի կափույրի մաքրման ծառայություն	հատ	30000
	VIII Կարդանային լիսեռներ		
102	Կարդանային լիսեռի հանման տեղադրման ծառայություն	հատ	50000
103	Կարդանային լիսեռի վերանորոգման ծառայություն	հատ	35000
	IX Արգելակներ		
104	Մեկ հատ արգելակման ժապավենի հանման տեղադրման ծառայություն	հատ	400000
105	Արգելակման թմբուկի վերանորոգման ծառայություն	հատ	150000
106	Խցուկի միջադիր փոխարինման ծառայություն	հատ	28000
	X Խցիկ		
107	Խցիկի հանման և տեղադրման ծառայություն	հատ	15000
	XI Հարթակ		
108	Հարթակի հանման և տեղադրման ծառայություն	հատ	35000
	XII Ընթացքային մաս		
109	Թրթուրի անջատման և միացման ծառայություն	հատ	40000
110	Ուղղապահի հանման տեղադրման ծառայություն	հատ	80000
111	Ուղղապահի վերանորոգման ծառայություն	հատ	160000
112	Թրթուրի ձգման մեխանիզմի հանման տեղադրման ծառայություն	հատ	140000
113	Թրթուրի ձգման մեխանիզմի վերանորոգման ծառայություն	հատ	110000
114	Տելեշկայի հանման տեղադրման ծառայություն	հատ	85000
115	Տելեշկայի վերանորոգման ծառայություն	հատ	1100000
116	Կողային շփանակի քանդման և հավաքման ծառայություն	հատ	500000
117	Կողային շփանակի վերանորոգման ծառայություն	հատ	210000
118	Կողային շփանակի խցուկի հանման տեղադրման ծառայություն	հատ	50000
119	Կողային շփանակի խցուկի կամ միջադիրների փոխարինման ծառայություն	հատ	60000
Նորոգման ընթացքում օգտագործված պահեստամասերի անվանումները			
	I ՇԱՐԺԻՉ		
120	Շարժիչի հիմնական ներդրակ	հատ	350000
121	Շարժիչի հիմնական ներդրակ (8401.12 շարժիչի)	հատ	50000
122	Շարժիչի շարժաթևային ներդրակ	հատ	290000
123	Շարժիչի մեկ հատ մխոցի մխոցային օղ	հատ	37000
124	Շարժիչի մեկ հատ գլան	հատ	92000
125	Շարժիչի մեկ հատ մխոց	հատ	95000
126	Շարժիչի մխոցի մեկ հատ մխոցամատ	հատ	13000
127	Շարժիչի մեկ հատ շարժաթև	հատ	240000
128	Շարժիչի մեկ հատ շարժաթև (8401.12 շարժիչի)	հատ	125000
129	Շարժիչի մեկ հատ շարժաթևի ականոց	հատ	3000
130	Շարժիչի յուղի պոմպի վերանորոգման լրակազմ	հատ	270000
131	Շարժիչի յուղի պոմպ(8401.12 շարժիչի)	հատ	85000
[illegible]	Շարժիչի յուղի պոմպ	հատ	480000
133	Շարժիչի յուղի պոմպի (8401.12 շարժիչի)	հատ	220000
134	Շարժիչի մեկ հատ գլխիկ	հատ	1260000
135	Շարժիչի գլխիկի մեկ հատ արտաածման փական	հատ	25000
136	Շարժիչի գլխիկի մեկ հատ ներաածման փական	հատ	25000

137	Շարժիչի բաշխիչ լիսեռ	հատ	1950000
138	Շարժիչի բաշխիչ լիսեռի մեկ հատ ականոց	հատ	14000
139	Շարժիչի բաշխիչ լիսեռի մեկ հատ հրիչ	հատ	12000
140	Շարժիչի ծնկաձև լիսեռ	հատ	5000000
141	Շարժիչի ծնկաձև լիսեռի մեկ հատ ատամնանիվ	հատ	85000
142	Շարժիչի ծնկաձև լիսեռի առանցքակալի վերևի և ներքևի կիսաօղեր	հատ	45000
143	Շարժիչի մեկ հատ թողարկիչ կոլեկտոր	հատ	950000
144	Շարժիչի ջրի /աջ, կամ ձախ/ խողովակ	հատ	50000
145	Շարժիչի մեկ հատ վառելիքի խողովակ	հատ	10000
146	Թափանիվ	հատ	290000
147	Թափանիվի ատամնավոր օղագոտի	հատ	65000
148	Շարժիչի Յուղի ռադիատորի վերանորոգման լրակազմ	հատ	360000
149	Շարժիչի մեկ հատ փոկ	հատ	25000
150	Շարժիչի գեներատորի	հատ	65000
151	Ստարտերի	հատ	125000
	II Սնուցման համակարգ		
152	Վառելիքի խողովակալար	հատ	25000
153	Ցածր ճնշման վառելիքի պոմպ	հատ	60000
154	Բարձր ճնշման վառելիքի պոմպի վերանորոգման լրակազմ	հատ	450000
155	Բարձր ճնշման վառելիքի մեկ հատ բոցամուղի լրակազմ	հատ	15000
156	Բարձր ճնշման վառելիքի բոցամուղեր	հատ	100000
	III Գազի արտանետման համակարգ		
157	Տուրբոճնշակի վերանորոգման լրակազմ	հատ	350000
	IV Հովացման համակարգ		
158	Ռադիատոր	հատ	3350000
159	Ռադիատորի կախոցի մեկ հատ բարձիկ	հատ	12000
160	Ռադիատորի հովվացուցիչ	հատ	1920000
161	Շարժիչի ջրի պոմպի լրակազմ	հատ	172000
162	Շարժիչի ջրի պոմպ	հատ	500000
163	Հովացման մեկ հատ խողովակ	հատ	10000
164	Օդի ռադիատոր	հատ	550000
165	Օդի ռադիատորի վերանորոգման լրակազմ	հատ	200000
166	Հովիհար	հատ	630000
	V Կցորդում		
167	Հիդրոտրանսֆորմատոր	հատ	7250000
168	Հիդրոտրանսֆորմատորի լրակազմ	հատ	2100000
169	Հիդրոտրանսֆորմատորի յուղի պոմպ	հատ	400000
170	Հիդրոտրանսֆորմատորի կափույր	հատ	185000
171	Հիդրոտրանսֆորմատորի կափույրի վերանորոգման լրակազմ	հատ	10000
	VI Հիդրավլիկ համակարգ		
172	Հիդրոբաքի կափույրի վերանորոգման լրակազմ	հատ	160000
173	Հիդրոբաքի կափույր	հատ	360000
174	Հիդրոգլանների վերանորոգման լրակազմ	հատ	350000
175	Ղեկային մեխանիզմ	հատ	290000
176	Ղեկային մեխանիզմի վերանորոգման լրակազմ	հատ	130000
177	Հիդրավլիկայի բաժխիչ	հատ	990000
178	Հիդրավլիկայի բաժխիչի վերանորոգման լրակազմ	հատ	270000
179	Հիդրավլիկայի պոմպ	հատ	1200000
180	Հիդրոգլանի խնձորակ	հատ	110000

181	Հիդրոգլանի կափույր	հատ	290000
182	Հիդրոգլանի կափույրի վերանորոգման լրակազմ	հատ	130000
	VII Փոխանցման տուփ		
183	Փոխանցման տուփ	հատ	8500000
184	Փոխանցման տուփի կափույր	հատ	1050000
185	Փոխանցման տուփի վերանորոգման լրակազմը	հատ	340000
186	Փոխանցման տուփի մեկ հատ օղ	հատ	100000
187	Փոխանցման տուփի մեկ հատ սկավառակ	հատ	90000
188	Ղեկային մեխանիզմի կափույր	հատ	800000
189	Ղեկային մեխանիզմի կափույրի վերանորոգման լրակազմ	հատ	338000
	VIII Կարդանային լիսեռներ		
190	Կարդանային լիսեռ	հատ	450000
[illegible]	Կարդանային լիսեռի վերանորոգման լրակազմ	հատ	165000
	IX Արգելակներ		
192	Արգելակման թմբուկի վերանորոգման լրակազմ	հատ	750000
193	Արգելակման թմբուկ	հատ	974000
194	Խցուկի միջադիր	հատ	42000
	XII Ընթացքային մաս		
195	Ուղղապահ լրակազմ	հատ	2673000
196	Ուղղապահի վերանորոգման լրակազմ	հատ	630000
197	Թրթուրի ձգման մեխանիզմ	հատ	960000
198	Թրթուրի ձգման մեխանիզմի վերանորոգման լրակազմ	հատ	333000
199	Կողային շփանակ	հատ	2500000
[illegible]	Կողային շփանակի լրակազմ	հատ	980000
[illegible]	Կողային շփանակի խցուկ	հատ	380000
202	Կողային շփանակի միջադիր	հատ	465000
	Ընդամենը՝ առավելագույն գումարը 33 000 000 (երեսուներեք միլիոն) ՀՀ դրամ		

Ծառայությունների մատուցումը կիրականացվի է 2017թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ / բայց ոչ ուշ քան 01.11.2017թ/ եռամսյակներում ըստ ՀՀ ԶՈՒ ԻԶՎ կողմից ներկայացված հայտերի:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ Ա գործառնական վարչություն
Հ/Հ 90001114079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ ռազմարտականների ապահովման ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

Ա/Ձ Մեժլում Գրիգորյան
ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան, 11 շենք, 20 բն.
«Ինեկոբանկ» ՓԲԸ, Աբովյանի մասնաճյուղ
Հ/Հ 205113205384
ՀՎՀՀ 43078315

ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 3
N ՇՀԾԶԲ-20/1-1 պայմանագրի

Վճարման ժամանակացույց*

Հ/հ	Ծառայության ֆինանսավորման անվանատողի անվանումը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2017թ							
		մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
	Ոչ էլեկտրական մեքենաների վերանորոգման և պահպանման ծառայություններ, այդ թվում՝								
1	**Հատուկ ինժեներական ճանապարհաշինական տեխնիկայի վերանորոգում**	10000000	10000000	26500000	26500000	26500000	33000000	33000000	33000000

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:*

CPV-ի կոդը՝ 50531100/1/4/1

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ Ա գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

Ա/Ձ Մեժլում Գրիգորյան
ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան, 11 շենք, 20 բն.
«Ինեկոբանկ» ՓԲԸ, Աբովյանի մասնաճյուղ
Հ/Հ 205113205384
ՀՎՀՀ 43078315

Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 4
N ՇՀԾՁԲ-20/1-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 4.1
N ԾՀԾՁԲ-20/1-1 պայմանագրի

ԱԿՏ N

Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ——————(Պատվիրատուի անունը)——————ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ——————(Կատարողի անունը)——————ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ——— -ին կնքված N ——————— գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ———— — -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն